Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-558[6]-10.04.2023-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հասարակական կազմակերպությունների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-22-Ն օրենքի (այսուհետեւ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից հանել «եւ կամավորների» բառերը:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «իր աշխատանքներում» բառերից հետո լրացնել «օրենքով սահմանված կարգով» բառերով.

2. 2-րդ մասի 2-րդ նախադասությունը հանել.

3. 3-8-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «(հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ), ինչպես նաեւ այն կամավորների (հաշվետու տարվա ընթացքում) թիվը, որոնց աշխատանքի տեւողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը» բառերը փոխարինել «եւ կամավորների թիվը՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից երեք ամիս հետո: